

## ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾՎԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԸՆԱԿԱՍ ԽԱՐՏԻՒ

Սույն Քաղաքաշինական խարտիայի մասնակից պետությունները, ի դեմս  
Կառավարությունների (այսուհետ՝ 'Կողմեր'),

գիտակցելով Անկախ Պետությունների Համագործակցության բնակելի վայրերի  
հաստատուն զարգացմանը եւ սոցիալ-տնտեսական խնդիրների ու շրջակա միջավայրի եւ  
բնարեսուրսային պոտենցիալի էկոլոգիական վերականգնման եւ պահպանման խնդիրների  
բալանսավորված լուծումը ապահովող տարածքների բարելավմանն անցնելու  
անհրաժեշտությունը, լինելով համոզված, որ քաղաքաշինության եւ բնակելի վայրերի  
ճարտարապետության եւ կենսունակության ևյութատարածքային միջավայրի ամբողջության  
ոլորտում քաղաքականության ձեւավորման եւ իրականացման հիմնական ուղղությունները  
թելադրված են Համագործակցության պետությունների ժողովուրդների ամենօրյա  
շահերից, համապատասխան նորմատիվ-իրավական բազայի ձեւավորման եւ  
կատարելագործման անհրաժեշտությամբ, նկատի առնելով.

"XXI դարի օրակարգ" գործողությունների ծրագիրը (բնակելի վայրերի հաստատուն  
զարգացման մասով), որն ընդունվել է շրջակա միջավայրի եւ զարգացման հարցերով  
ՄԱԿ-ի Միջազգային կոնֆերանսի ժամանակ (Ռիո դե Ժանեյրո, 1992 թվական),

"Բնակավայրերի հարցերով Ստամբուլի հոչակագիրը" եւ "ՀԱԲԻԹԱՋ-ի օրակարգը",  
որոնք ընդունվել են բնակավայրերի հաստատուն զարգացման հարցերով ՀԱԲԻԹԱՋ II  
ՄԱԿ-ի Միջազգային կոնֆերանսի ժամանակ (Ստամբուլ, 1996 թվական),

"Բնակավայրերի հարցերով ՄԱԿ-ի Հանձնաժողովի հանդիպումների ևյութերը"  
(Նայրորի, 1997 թվական) եւ ԵՏԿ բնակավայրերի հարցերով Կոմիտեի նստաշրջանների  
ևյութերը (Ժնև, 1996 եւ 1997թթ.),

"ՄԱԿ-ի ԵՏԿ բնակավայրերի հաստատուն զարգացման պլանավորման դեկավար  
սկզբունքները" (1996 թվական) եւ ԵՏԿ բնակավայրերի հարցերով Կոմիտեի դիտարկումը  
"ԵՏԿ տարածաշրջանում բնակավայրերի հաստատուն զարգացման համար" (1996 թվական),

դեկավարվելով ԱՊՀ մասնակից պետությունների բազմակողմ համագործակցության  
շրջանակներում ստորագրված փաստաթղթերով,

ընդունեցին սույն Քաղաքաշինական խարտիան, որը որոշում է Համագործակցության  
պետությունների բնակավայրերի հաստատուն զարգացման եւ տարածքների բարեկարգման  
դեկավար սկզբունքները, նպատակները, հիմնական ուղղությունները եւ խնդիրները,  
ինչպես նաև Քաղաքաշինական խարտիայի իրականացման ուղղությամբ Կողմերի համատեղ  
գործողությունները:

### 1. ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԴԵԿՎԱՐ ՍԿԶԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կողմերը, որպես դեկավար, ճանաչում են բնակավայրերի հաստատուն զարգացման եւ  
տարածքների բարեկարգման հետեւյալ սկզբունքները.

ինքնավարությունը եւ ժողովրդավարությունը, որոնք ապահովում են  
յուրաքանչյուր ժողովրդի իրավունքը զարգացման իրենց ուղղությունունելով՝ հաշվի առնելով  
համաշխարհային հանրության կողմից ընդունված ընդհանուր շահերն ու նպատակները,

հասարակության սոցիալական, տնտեսական եւ էկոլոգիական զարգացման  
բալանսավորվածությունը, որը ապահովում է մարդու կենսունակության  
կայունությունը,

անվտանգությունը, որը որոշում է յուրաքանչյուր մարդու իրավունքը՝ ապրելու  
իր կյանքի եւ առողջության համար սոցիալապես եւ էկոլոգիապես անվտանգ  
միջավայրում, միջավայրի մարդասիրությունը, որն ապահովում է  
ճարտարապետությունում եւ քաղաքաշինությունում ազգային եւ եթենիկ մշակութային  
սովորությունների եւ առանձնահատկությունների զարգացումը:

### 2. ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ

## ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Կողմերը ներկայիս սերնդի կյանքի պայմանների լավացման նպատակներով, առանց ապագա սերունդների կարիքներին վնասելու, որոշեցին բնակավայրերի հաստատուն զարգացման եւ տարածքների բարեկարգման հետեւյալ նպատակները.

պետությունների քաղաքակենտրոնացված եւ միջընակեցված քաղաքային, գյուղական եւ այլ բնակավայրերի համալիր զարգացում եւ էկոլոգիական վերականգնում,

բնակչության բնակարանային ապահովածության եւ ապրելու պայմանների բարեկարգում,

սոցիալական ենթակառուցվածքի համակարգերի կատարելագործում, ներառյալ՝ բնակչության ժամանակակից հանգստի տեղերի եւ առողջացման համակարգերի կազմակերպումը,

Եկոլոգիապես անվտանգ արդյունաբերական, տրանսպորտային եւ ինժեներատեխնիկական ենթակառուցվածքների ձեւավորում,

յուրաքանչյուր ժողովրդի պատմամշակութային ժառանգության օբյեկտների պահպանում եւ վերածնունդ,

հողօգտագործման կարգավորման ընթացակարգերի կատարելագործում:

### 3. ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ ՀԱՍՎԳՈՐԾՎԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՍԱԿԱՆ ՈՒՂՈՌԹՅՈՒՆՆԵՐԸ

Կողմերը, որպես բնակավայրերի հաստատուն զարգացման եւ տարածքների բարեկարգման հիմնական ուղղություններ, ներկայիս փուլում սահմանել են հետեւյալը.

մարդու կյանքի եւ առողջության համար անվտանգ միջավայրի ստեղծում քաղաքաշինական միջոցներով, ինչը նպաստում է նրա ֆիզիկական եւ հոգեկան զարգացմանը, համարժեք է պետությունների սոցիալ-տնտեսական եւ մշակութային զարգացման պրոցեսիվ տեսնեցներին,

բնակեցման համակարգերի կատարելագործում, որոնք իրագործվում են՝ հաշվի առնելով եթևիկ եւ ազգային սովորույթները,

հողային միջոցների ռացիոնալ օգտագործում՝ համագործակցության մասնակից պետությունների ռազմավարությանը համապատասխան, որն արտացոլում է հողային օրենսդրությունում եւ հողօգտագործման մասին նորմատիվ-հրավական ակտերում,

քաղաքների եւ նրանց հարող տարածքների զարգացման ապահովում՝ արտադրական, սոցիալական, տրանսպորտային եւ ինժեներատեխնիկական ենթակառույցների կատարելագործման խնդիրների արդյունավետ եւ համալիր լուծում, շրջակա միջավայրի օպտիմալացում եւ Եկոլոգիական վերանորոգում անցկացնելու հաշվին,

բնակավայրերի տարածային կազմակերպման կատարելագործում, դրանց ճարտարապետական տեսքի, շինությունների էսթետիկական որակների բարձրացում, դրանց բարեկարգումն ու կանաչապատումը,

առավելապես "մաքուր տեխնոլոգիաների կիրառում" բնակավայրերի հաստատուն զարգացման նոր տեխնոլոգիաների կիրառման եւ տարածքների բարեկարգման ժամանակ,

համագործակցության մասնակից պետությունների քաղաքացիների (բնակչության) բնակարանային ապահովածության բարելավում ժամանակակից ինժեներատեխնոլոգիական

սարքավորումներով, բարձր Եկոլոգիական անվտանգությամբ եւ ապրելու պայմանների հարմարավետությամբ՝ շենքերի կառուցման միջոցով,

չքավորներին եւ այլ սոցիալապես պաշտպանվող բնակչության խմբերին բնակարաններով ապահովում, կառույցի վերանորոգում եւ արդիականացում, որոնք ապահովում են բնակչության կյանքի չափանիշների պահպանումը,

բնակչության սոցիալական սպասարկման համակարգերի զարգացում եւ կատարելագործում,

բարձր բնակչության եւ ինժեներակրաբանական պայմաններով լեռնային, անապատային, սեյսմավտանգավոր եւ այլ տարածքների յուրացման եւ կառուցման մասին

քաղաքաշինական եւ ինժեներատեխնիկական որոշումների կատարելագործում,

գյուղական վայրերում աշխատանքի եւ կենցաղի բարենպաստ պայմանների ապահովում, ծառայությունների ոլորտի զարգացում, այդ բնակավայրերի քաղաքների (կենտրոնների) հետ եւ միմյանց միջեւ տրանսպորտային եւ տեղեկատվական կապերի կատարելագործում,

բնակավայրերի ինժեներատեխնոլոգիական ապահովման էներգաարդյունավետ համակարգերի կիրառում, էկոլոգիապես մաքուր եւ անվտանգ տեղային եւ ոչ տրադիցիոն էներգիայի աղբյուրների օգտագործում (քամու, արեւային, գետաբերմալ եւ այլն),

բնակչությանը բավարար քանակությամբ խմելու ջրով ապահովելու համար շրամատակարարման եւ ջրահեռացման համակարգերի արդիականացում, խմելու ջրի որակի եւ կեղտաջրերի մաքրման որակի բարձրացում՝ ոչ արտադրական ռեսուլսային կորուստների մինիմալացման հետ մեկտեղ,

սեփականության բոլոր ձեւերի ձեռնարկությունների, հատկապես փոքր եւ միջին բիզնեսի զարգացման համար պայմանների ձեւավորում, աշխատանքային տեղերի ստեղծում՝ բնակչության սոցիալական կազմին եւ քանակին որակապես եւ քանակապես համարժեք,

արտադրական գոտիների զարգացման եւ արդյունաբերական համալիրների զարգացման ապահովում, առկա բնական նյութական եւ մարդկային միջոցներով, նորագույն եւ գիտատարողունակ տեխնոլոգիաների, էներգիայի էկոլոգիապես անվտանգ աղբյուրների ռացիոնալ օգտագործմամբ,

կենցաղային պինդ եւ արդյունաբերական թափունների հավաքման, հեռացման եւ վնասազերծման համակարգի կատարելագործում՝ ներառյալ թունավոր եւ դժվար վերամշակվողները,

բնակավայրերի բնակելունակ տնտեսության գործունեության արդյունավետության կատարելագործում եւ բարձրացում,

որպես հասարակության ազգային սեփականության ճարտարապետություն՝ պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանում, վերականգնում, եւ ռացիոնալ օգտագործում, էկոլոգիական զբոսաշրջության զարգացում,

բնական լանդշաֆտների պահպանություն եւ բնապահպանական տարածքների համակարգերի ստեղծում, բնական ռեսուրսների էկոլոգիական վերանորոգմամբ քաղաքակենտրոնացված եւ միջընակեցված տարածքներում բնական եւ վերականգնված լանդշաֆտների առավելագույն օգտագործման դեպքում,

քաղաքաշինական մեթոդների եւ միջոցների օգտագործում քաղաքակենտրոնացված տարածքները բնական եւ տեխնածին աղետների բացասական հետեւանքների նախազգուշացման եւ նվազեցման նպատակով,

խոշոր եւ խոշորագույն քաղաքների (քաղաք-մետրոպոլի) քաղաքաշինական զարգացման կառավարման կատարելագործում՝ դրանց շրջապատող ագլոմերացիաներով եւ քաղաքակենտրոնացված տարածքներով:

#### 4. ԲՆԱԿՎԱՅՐԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կողմերը ներկայիս փուլում, որպես բնակավայրերի հաստատուն զարգացման եւ տարածքների բարեկարգման անցնելու հիմնական խնդիրներ, որոշել են հետեւյալը.

4.1. Ազգային եւ միջազգային նորմատիվ-իրավական փաստաթղթերի համակարգի ստեղծում, որն ապահովում է քաղաքաշինական գործունեության կարգավորումը ազգային, տարածաշրջանային եւ տեղական մակարդակներով, որոնք ուղղված են.

բնակավայրերի հաստատուն զարգացման դեկավար սկզբունքների իրագործման անցնելու իրավական ապահովմանը, քաղաքաշինական միջոցներով բնակեցման համակարգի եւ տարածքների բարեկարգմանը,

քաղաքաշինական գործունեության պետական կառավարման մարմինների բոլոր մակարդակների եւ այլ սուբյեկտների իրավունքների, պարտավորությունների եւ պատասխանատվության օրենսդրական կանոնակարգմանը,

քաղաքաշինությունում պետության կողմից երաշխավորված սոցիալական չափանիշի

օրենսդրական ամրապնդմանը,

քաղաքային, գյուղական եւ այլ բնակավայրերի, ինչպես նաև միջընակեցված տարածքների օգտագործման նորմատիվ-հրավական կանոնակարգմանը,

քաղաքաշինական եւ տարածքային պաշարների ռացիոնալ օգտագործմանը,  
սոցիալական, արտադրական, տրանսպորտային եւ ինժեներատեխնիկական  
ենթակառուցվածքների գարգացմանը,

բնական եւ պատմամշակութային արժեքների պահպանմանը:

4.2 Քաղաքաշինական գործունեության կառավարման համակարգի կատարելագործում.

տարածաշրջանային եւ տեղական մակարդակներով ճարտարապետական եւ  
քաղաքաշինական գործունեության պետական կառավարման մարմինների համակարգի  
ձեւավորման եւ ամրապնդման հաշվին,

ազգային, տարածաշրջանային եւ տեղական մակարդակներով պետական կառավարման  
մարմինների հրավասությունների եւ գործառույթների ու պատասխանատվության  
նորմատիվ-հրավական ամրապնդման եւ սահմանազարման հաշվին,

քաղաքաշինական գործունեությամբ պետական կառավարման մարմինների մեխանիզմի  
եւ կազմակերպչական ձեւերի կատարելագործման հաշվին,

քաղաքաշինական քաղաքականության ձեւավորման եւ անցկացման միջավայրի  
էկոլոգիական վերանորոգման եւ բարենպաստ վիճակի պահպանման գործում տեղական  
ինքնակառավարման մարմինների դերի եւ բնակչության դերի ուժեղացման հաշվին:

4.3 Բնակավայրերի գարգացման եւ տարածքների բարեկարգման երկարաժամկետ  
ծրագրավորման եւ կանխատեսման գործում ծրագրերի եւ նախագծերի մշակում եւ  
իրականացում, որոնք ուղղված են.

բնակչության կյանքի մակարդակի եւ որակի բարձրացմանը բնակավայրերի եւ  
տարածքների տարածքային կատարելագործման հաշվին,

բնակչության ապրելակերպի անվտանգ պայմանների ստեղծմանը,

հասարակության սոցիալ-մշակութային կարողության պահպանությանը եւ  
գարգացմանը,

բնության պահպանությանը, տարածքների նյութական եւ բնական պաշարների  
ռացիոնալ օգտագործմանը՝ տարածքը ըստ գարգացման տարբերակելու հաշվարկով  
(պաշարային կարողությամբ եւ սահմանափակումներով),

բնակչության ժողովրդագրության կարողության կայունացմանը եւ ընդլայնմանը,

քաղաքային, գյուղական, այլ բնակավայրերի եւ տարածքների էկոլոգիապես  
կողմնորոշված տարածքային կազմակերպման նոր նմուշներին,

տարածքի բարեկարգման միջպետական, ազգային, տարածաշրջանային եւ գոնալ  
ծրագրերին ու նախագծերին:

4.4 Քաղաքաշինական գործունեության տեղեկատվական ապահովման համակարգի  
ստեղծում, որոնք հիմնված են.

Ժամանակակից տեղեկատվական միջոցների եւ տեխնոլոգիաների օգտագործման վրա,

քաղաքաշինական գործունեության, քաղաքաշինական եւ տարածքային կադաստրների  
մասին տեղեկությունների բանկերի ձեւավորման վրա,

քաղաքային, բնակելի, սոցիալական, կոմունալ, տրանսպորտային, տարածքային  
գարգացման եւ էկոլոգիական անվտանգության ցուցանիշների (հնդիկատորների)  
միասնական (համաձայնեցված) համակարգի մշակման եւ գործունեության վրա եւ դրանց  
մոնիթորինգի:

4.5 Քաղաքաշինական գործունեությունում կառավարման մարմինների  
մասնագետների, գիտական, նախագծային եւ մասնակարժական կադրերի պատրաստման եւ  
վերապատրաստման կատարելագործում, որը նախատեսում է.

քաղաքաշինական գործունեության բնագավառում մասնագիտացված, այդ թվում՝  
միջպետական, նախապատրաստման եւ վերապատրաստման կենտրոնների կազմակերպում,

ճարտարապետների, տարածքային պլանավորման մասնագետների համար միջպետական չափանիշների  
եւ ուսման ծրագրերի մշակում,

մասնագետների ուսման ձեւերի եւ մեթոդիկայի բնագավառում փորձի փոխանակում,  
մեթոդական, տեղեկատվական եւ ուսումնական գրականության նախապատրաստում եւ

հրապարակում:

## 5. ԶԱՂԱՔՉԻՆԱԿԱՆ ԽԱՐՏԻՎՅԻ ԻՐՎԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԴՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԵԴԱԿՈՒՄՆԵՐ

Կողմերը հանձնարարում են պետական կառավարման ազգային մարմիններին շինարարական, քաղաքաշինական եւ ճարտարապետական քաղաքականությամբ ապահովել սույն Զաղաքաշինական խարտիայի իրականացման միջոցով.

Քաղաքաշինության եւ տարածքային զարգացման բնագավառում միջապետական նորմատիվ-իրավական ակտերի ստեղծման գործում փոխգործակցություն եւ խորհրդակցական աշակցման կազմակերպման,

ազգային եւ նորմատիվ-իրավական ակտերի եւ քաղաքաշինության ու Համագործակցության պետությունների տարածքային զարգացման, ազգային եւ միջապետական տեղեկատվական բանկերի ստեղծման մասին,

Համագործակցության պետությունների բնակավայրերի հաստատուն զարգացման եւ տարածքների բարեկարգման կառավարման գործիքների եւ մեխանիզմների մշակման՝ միջազգային կազմակերպությունների կողմից ճանաչված ցուցանիշների (ինդիկատորների) միասնական (համաձայնեցված) համակարգի ադապտացիայի հիման վրա,

տարածքի զարգացման փոխհամաձայնեցված նախագծման, շրջակա միջավայրի պահպանության եւ էկոլոգիական վերականգնման ապահովում այն հատվածներում, որոնք միջապետական հետաքրքրություն են ներկայացնում, այդ թվում՝ տրանսպորտային հաղորդակցային միջանցքների շինարարության միջապետական ծրագրերի կազմում, միջսահմանային տարածաշրջանների բարելավման եւ շինարարության այլ օբյեկտների,

մայրաքաղաքների, խոշոր եւ խոշորագույն քաղաքների (քաղաք-մետրոպոլի) եւ դրանց հարակից ագլոմերացիաների եւ քաղաքակենտրոնացված տարածքների զարգացման քաղաքաշինական սկզբունքների սահմանման,

ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների, քաղաքաշինական եւ տարածքային մոնիթորինգի միջոցների եւ համատեղ համակարգերի ներդրմանը աջակցություն,

Համագործակցության մասնակից պետությունների տեղեկատվայնորեն համատեղելի քաղաքաշինական եւ տարածքային կադաստրների համակարգի ստեղծման,

գոյություն ունեցող սահմանումների հիման վրա քաղաքաշինական գծով տերմինների եւ հասկացությունների ազգային եւ միջապետական բառարանների մշակման,

Համագործակցության մասնակից պետությունների քաղաքաշինության եւ տարածքային զարգացման հարցերով մասնագետների պատրաստման եւ վերապատրաստման բնագավառում

փորձի փոխանակման համակարգի ստեղծման,

սույն Զաղաքաշինական խարտիայի իրականացումը եւ զարգացումը ապահովող միջապետական ծրագրերի եւ նախագծերի մշակում (առաջնային միջապետական փաստաթղթերի

ցանկը կցվում է), համաձայնեցված ժամկետներում եւ հաշվի առնելով Կողմերի շահագրգռվածությունը:

## 6. ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Զաղաքաշինական խարտիան ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից, իսկ այն պետությունների համար, որոնց օրենսդրությունը պահանջում է ներպետական ընթացակարգերի կատարում՝ նման ընթացակարգերի կատարման մասին ավանդապահին ծանուցումը հանձնելու օրվանից:

Զաղաքաշինական խարտիայում, այն ստորագրած Կողմերի համաձայնությամբ, կարող են կատարվել լրացումներ եւ փոփոխություններ, որոնք հանդիսանում են սույն Զաղաքաշինական խարտիայի անբաժանելի մասը եւ ուժի մեջ են մտնում վերոհիշյալ ընթացակարգերին համապատասխան:

Յուրաքանչյուր Կողմ կարող է հայտարարել Զաղաքաշինական խարտիայի մասնակիցների կողմից իր դուրս գալու մասին՝ այդ մասին դուրս գալուց ոչ պակաս,

քան 6 ամիս առաջ, ավանդապահին գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով:

Քաղաքաշինական խարտիան բաց է դրա նպատակները եւ սկզբունքները կիսող այլ պետությունների կողմից միանալու համար՝ ավանդապահին նման միացման մասին փաստաթղթերը փոխանցելու միջոցով:

Կատարված է Մինսկ քաղաքում, 1999 թվականի հունիսի 4-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն:

Բնօրինակը պահպում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր քարտուղարությունում, որը սույն Քաղաքաշինական խարտիան ստորագրած յուրաքանչյուր պետության կուղարկի դրա հաստատված պատճենը:

Հավելված  
Անկախ Պետությունների  
Համագործակցության  
Քաղաքաշինական խարտիայի

## ՑԱՆԿ

### ԹՎԱԿՑՈՒՅԹԻ ԽԱՐՏԻԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՅՐԱԿՑԻ ՄԻԶՊԵՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ

1. Համագործակցության պետությունների բնակավայրերի հաստատուն զարգացման եւ տարածքների բարեկարգման կոնցեպցիաներ:
2. Համագործակցության պետությունների քաղաքաշինական գործունեության առաջնային ուղղություններով համալիր գիտատեխնիկական ծրագիր:
3. Համագործակցության պետությունների բնակավայրերի եւ տարածքների էկոլոգիական վերանորոգման կոնցեպցիա՝ կապված համապատասխան զարգացմանն անցնելու հետ:
4. Համագործակցության պետությունների մայրաքաղաքների, խոշոր եւ խոշորագույն քաղաքների եւ դրանց հարակից տարածքների զարգացման քաղաքաշինական սկզբունքների կոնցեպցիա:
5. Գյուղական վայրերի զարգացման հավասարակշռված քաղաքականության ազգային ծրագրերի մշակման մասին, Համագործակցության պետությունների տնտեսության մեջ գյուղական շրջանների նպատակային ներդրման եւ ինտեգրման ուժեղացման մասին:
6. Համագործակցության պետություններում բնակեցման, տարածների յուրացման եւ բարեկարգման ու լեռնային, անապատային, սեյսմիկ եւ այլ բարդ բնակլիմայական եւ ինժեներակրաբանական պայմաններում բնակավայրերի հաստատուն զարգացմանն անցնելու կոնցեպցիաների (սխեմաների) ձեւավորման եւ մշակման սկզբունքների մասին Երաշխավորություններ:
7. Առանձին օբյեկտների (համալիրների) շինարարության, սահմանամերձ տարածքների (շրջանների) եւ Համագործակցության պետությունների անդրսահմանային տրանսպորտահաղորդակցային միջանցքների ազդեցության զոնաների գծով փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ծրագրերի եւ նախագծերի մշակման ու համաձայնեցման կարգի մասին Համաձայնագիր:
8. Համագործակցության պետությունների քաղաքաշինական եւ տարածքային (հողային) կադաստրների մասին ազգային տեղեկատվական համակարգերի ձեւավորման եւ փոխգործակցության սկզբունքների մասին կոնվենցիա:
9. Բնակավայրերի հաստատուն զարգացման, տարածների բարեկարգման եւ էկոլոգիական վերականգնում իրականացնելու փորձի փոխանակման եւ ստեղծման ուղղությամբ գործողությունների համակարգման, Համագործակցության պետություններում ազգային գետեղեկատվական համակարգերի մոնիթորինգի մասին Համաձայնագիր:
10. Համագործակցության պետություններում քաղաքաշինական քաղաքականության

անցկացման մասին տվյալների միջպետական բանկի ստեղծման մասին Համաձայնագիր:

11. ԱՊՐ պետություններում ընակարանային քաղաքականության Կոնցեպցիաներ:

12. Համագործակցության պետությունների կողմից ընակչության խմբերի փոխադարձ ճանաչման մասին, որոնք սոցիալական (մունիցիպալ) ընակարանով ապահովելու կարիք ունեն:

13. ԱՊՐ մասնակից պետությունների քաղաքացիների կողմից կատարվող ընակարանային ոլորտում գործողությունների կատարման ընդհանուր սկզբունքների մասին Համաձայնագիր:

14. Ընակարանային շուկայի ծեւավորման համար նորմատիվ-իրավական հիմքի եւ ֆինանսավորման արտաքրութետային աղբյուրների օգտագործման մեխանիզմների ծեւավորման ուղղությամբ Երաշխավորություններ:

15. Քաղաքաշինական գործունեության, Համագործակցության պետություններում պետական քաղաքաշինական եւ տարածքային կադաստրների ստեղծման եւ վարման բնագավառում հիմնական (առաջատար) ազգային եւ միջպետական գիտահետազոտական, նախագծային եւ ուսումնական կազմակերպությունների Ցանկ:

16. Համագործակցության պետություններում քաղաքաշինական գործունեության ոլորտում կառավարման մարմինների մասնագետների, գիտական, նախագծային եւ մանկավարժական կադրերի պատրաստման եւ վերապատրաստման համակարգի մասին Համաձայնագիր:

\* Խարտիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2001 թվականի փետրվարի 8-ից: